



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 սեպտեմբերի 2016 թվականի N 893 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքի ֆինանսական վիճակի բարելավման համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանին Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2016 թվականի ինն ամսում հատկացնել 160,000.0 հազ. դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» հոդվածով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն

ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման N 11 հավելվածում կատարել
լրացումներ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. սեպտեմբերի 5
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.54 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
		ոչ ֆինանսական ցուցանիշներ		ֆինանսական ցուցանիշներ	
		ինն ամիս	տարի	ինը ամիս	տարի
1.2. Տրանսֆերտներ					
Ծրագրային դասիչը		<u>Անվանումը</u> Աջակցություն ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքին			
1047	ԾՏ05	<u>Նկարագրությունը</u> ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքի ֆինանսական վիճակի բարելավում			
Շահառուների թիվը	1. Տրանսֆերտ ստացող ՏԻՄ-երի թիվը	1	1		
Գումարը (հազ. դրամ)		x	x	160,000.0	160,000.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը					

Շահառուների ընտրության չափանիշները

Համայնքի սոցիալական խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1047 Աջակցություն համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին և անհատներին

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Համայնքներում կյանքի ստանդարտների բարելավում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (բաժինը/խումբը/դասը)	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	ՀՀ 2016 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)
ծրագիրը	միջոցառումը			
1047			ԾՐԱԳԻՐ	
			Աջակցություն համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին և անհատներին	160,000.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u> Աջակցություն՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքի ֆինանսական վիճակի բարելավման համար	
			<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u> Համայնքներում կյանքի ստանդարտների բարելավում	
			Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ	
	ԾՏ05		Աջակցություն ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքի ֆինանսական վիճակի բարելավմանը (ՀՀ Լոռու մարզպետարան)	160,000.0
			<u>Տրանսֆերտի նկարագրությունը</u> Պետական աջակցություն՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքի ֆինանսական վիճակի բարելավման համար	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ